ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության

001 մասնագիտական խորհրդին

Պաշտոնական ընդդիմախոս, ԵՊՀ քրեական իրավունքի

ամբիոնի դասախոս, իրավ գիտ. թեկնածու Ա. Հ. Օսիկյանից

ԿԱՐԾԻՔ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ Զարուհի Ռոմիկի Հարությունյանի ‹‹Կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական և հոգեբանական պատճառները›› ատենախոսության

Կոռուպցիան համարվում է ժամանակակից հասարակությունների առավել վտանգավոր և արատավոր երևույթներից մեկը, որը խաթարում է պետական կառավարման արդյունավետությունը, նվազեցնում հանրային ինստիտուտների նկատմամբ վստահությունը, խեղաթյուրում է սոցիալ-տնտեսական զարգացման բնականոն ընթացքը: Կոռուպցիան հանդես է գալիս որպես համակարգային բնույթի բացասական երևույթ, որը ներթափանցում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներ՝ ազդելով ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հարաբերությունների վրա:

Վերջին տասնամյակներում կոռուպցիան նահանջելու փոխարեն ավելի ու ավելի տարածում է ստանում, որի համար ինչպես միջազգային կազմակերպությունների, այնպես էլ առանձին պետությունների մակարդակով կոռուպցիայի դեմ պայքարը դարձել է առաջնային ուղղություններից մեկը: Այս նպատակով իրականացվում են լայնածավալ հակակոռուպցիոն բարեփոխումներ, կատարելագործվում է օրենսդրական դաշտը, ներդրվում են վերահսկողական, կանխարգելիչ և հաշվետվողականության բարձրացման մեխանիզմներ: Չնայած այդ

քայլերին, կոռուպցիան շարունակում է պահպանել իր արդիականությունը՝ դրսևորվելով տարբեր ձևերով և աստիճաններով հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:

Այս իրավիճակը հարուցում է միջազգային հանրության մտահոգությունը, խնդրի լուծման գործում: Նշենք, որ փորձը ցույց է տալիս, որ միայն իրավական-վարչական կամ պատժողական մոտեցումները բավարար չեն խնդրի լիարժեք լուծման համար: Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը չպետք է սահմանափակվի միայն հետևանքների վերացմամբ, քանի որ վերարտադրությունը պայմանավորող խորքային պատճառները մնում են բավարար չափով չուսումնասիրված: Ուստի առանձնահատուկ նշանակություն ունի կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական և հոգեբանական պատճառների խորքային ուսումնասիրությունը: Մասնավորապես, կոռուպցիոն վարքագծի ձևավորման գործընթացում կարևոր դեր են խաղում անձի արժեքային կողմնորոշումները, բարոյական նորմերի ընկալումը, սոցիալական պատասխանատվության մակարդակը, ինչպես նաև վարքագծի արդարացման ներքին հոգեբանական մեխանիզմները:

Այս համատեքստում կոռուպցիոն վարքագծի ուսումնասիրությունը պահանջում է համալիր և միջդիսցիպլինար մոտեցում՝ համադրելով կրիմինալոգիական գիտության գործիքակազմը: Միայն նման մոտեցման միջոցով հնարավոր է բացահայտել ոչ միայն երևույթի արտաքին դրսևորումները, այլև դրա ներքին պատճառական մեխանիզմները:

Հետևաբար, տվյալ թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ այն հիմնվում է ոչ միայն իրավական կարգավորումների, այլև կոռուպցիոն վարքագծի ձևավորման խորքային կրիմինալոգիական և հոգեբանական պատճառների

գիտական ուսումնասիրության վրա: Վերջինս հնարավորություն է տալիս մշակել առավել ամբողջական, կանխարգելիչ և երկարաժամկետ արդյունք ապահովող հակակոռուպցիոն քաղաքականություն: Հետևաբար կասկած չի հարուցվում, որ կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական և հոգեբանական պատճառների ուսումնասիրությունը ժամանակակից գիտության և պետական կառավարման համակարգի համար ունի բացառիկ արդիականություն:

Այս ամենն էլ վկայում է Զ.Հարությունյանի թեմայի արդիականությունը, որը պայմանավորում է անհրաժեշտություն՝ կոռուպցիայի դեմ պայքարը դիտարկել ոչ միայն իրավական-պատժողական, այլև կրիմինալոգիական-հոգեբանական պատճառների բացահայտման ու կանխարգելման տեսանկյունից, որն էլ հնարավորություն է տալիս ձևավորել առավել ամբողջական և արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականություն:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ, այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են տասնմեկ պարագրաֆներ, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և չորս հավելվածներից:

Ներածությունում ներկայացվել են հետազոտության թեմայի հրատապությունը, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, հետազոտության մեթոդաբանական, գիտական նորույթը և կատարված հետազոտությունների արդյունքում տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում՝ Պահանջմունքների անբավարարության դերը կոռուպցիոն վարքագծի ձևավորման մեջ, հեղինակը հիմնավորվել է այն մոտեցումը, որ խիստ չբավարարված նյութական, սոցիալական կամ հոգեբանական պահանջմունքների պայմաններում զգալիորեն աճում է հակահիրավական վարքագծի դրսևորման հավանականությունը մարդկանց մեծամասնության

մոտ: Թեև դա չի կարող դիտարկվել որպես ուղիղ և միակ պատճառ, սակայն նման իրավիճակներում ձևավորվում է ընդհանուր հոգեբանական լարվածություն և սոցիալական անբավարարություն, որը գրեթե բոլոր դեպքերում ուժեղացնում է ռիսկային վարքագծային ընտրության հնարավորությունը: Այնուհետև հեղինակը քննարկում է անձի ոչ թե կենսաբանական նորմալ պահանջմունքները, այլ գերաճած, խեղաթյուրված պահանջմունքները, ինչպես նաև պահանջմունքների խեղաթյուրված համակարգը: Ընդգծվում է, եթե բնական պահանջմունքների անբավարարության դեպքում անձը կարող է ընտրել կոռուպցիոն ճանապարհը, ապա վերջինս առավել հավանականությամբ կարող է տեղի ունենալ գերաճած պահանջմունքների և ցանկությունների դեպքում: Այս մասով հեղինակը տարբերել է գերաճած պահանջմունք և ցանկություն հասկացությունները կոռուպցիոն վարքագծի պատճառը ճիշտ ‹‹դիագնոզելու›› համար: Անկասկած այս գլխում ընդգծվել է պահանջմունքների անբավարարության դերը որպես կոռուպցիոն վարքագծի կարևոր կրիմինալոգիական գործոն:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ Անձի սոցիալականացման առանձնահատկությունները որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ, հեղինակի մոտեցումը առանձնանում է իր հետևողականությամբ և պատճառահետևանքային շղթայի բավականին ամբողջական ներկայացմամբ: Հատկապես դրական է այն, որ սոցիալականացման գործընթացը դիտարկվում է ոչ միայն որպես ներկա սոցիալական միջավայրի ազդեցություն, այլ սկսվում է արդեն անձի վաղ՝ մանկության փուլից, ինչը հնարավորություն է տալիս ավելի խորքային հասկանալ վարքագծի ձևավորման աղբյուրները:

Հեղինակի կողմից չեն անտեսվել նաև ռեֆերենտային խմբերի ընդգծումը հատկապես՝ ընտանիքի, կրթական հաստատության դերը, քանի որ դրանք

իրականում ունեն զգալի ազդեցություն արժեքային կողմնորոշումների և վարքագծային նորմերի ձևավորման վրա: Նույնը վերաբերում է նաև կրթական հաստատություններին, որոնք հանդիսանում են սոցիալական վերահսկողության և իրավագիտակցության ձևավորման առանցքային ինստիտուտներից մեկը և էական ազդեցություն ունեն անձի արժեքային կողմնորոշումների և վարքագծային նորմերի ձևավորման վրա: Հեղինակը այսպիսով կարողացել է կապել անձի զարգացման տարբեր փուլերը մեկ միասնական վերլուծական համակարգում:

Պետք է նշել, որ հեղինակին հաջողվել է ներկայացնել գիտական առումով հիմնավորված և բովանդակալից աշխատանք, որը առանձնանում է իր ամբողջականությամբ և վերլուծական խորությամբ: Ներկայացված հետազոտության շրջանակներում հեղինակի կողմից ձևակերպված են մի շարք կարևոր և նպատակային առաջարկություններ, որոնք ուղղված են կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության արդյունավետության բարձրացմանը, դրա մեխանիզմների կատարելագործմանը և գործնական կիրառելիության ընդլայնմանը՝ ապահովելով առավել համակարգված և կայուն արդյունքներ:

Հատկանշական է, որ հեղինակի կողմից ձևակերպված առաջարկությունները ունեն հստակ գիտագործնական ուղղվածություն և միտված են կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության արդյունավետության էական բարձրացմանը, դրա ինստիտուցիոնալ մեխանիզմների կատարելագործմանը և կիրառական գործիքակազմի ընդլայնմանը: Առանձնահատուկ արժեք է ներկայացնում հետազոտության փորձարարական մասը, որը զգալիորեն ամրապնդում է աշխատանքի գիտական հիմնավորվածությունը: Իրականացված հետազոտական տվյալների վերլուծությունը ոչ միայն լրացնում է տեսական դրույթները, այլև

ապահովում է դրանց գործնական հաստատումը՝ բարձրացնելով աշխատանքի վստահելիությունն ու կիրառելիությունը:

Կոռուպցիոն վարքագիծ ձևավորող կրիմինալոգիական և հոգեբանական ներանձնային խորքային նախադրյալները և կոռուպցիայի կանխումը՝ երրորդ գլխում, ուսումնասիրվում են կոռուպցիոն վարքագծի ձևավորման ներքին՝ անհատական մակարդակի գործոնները: Առավել արժեքավոր են հեղինակի կողմից հոգեբանական պաշտպանական մեխանիզմների դերի վերլուծությունները կոռուպցիոն վարքագծի ձևավորման գործընթացում: Հեղինակը հերթականությամբ անդրադարձել է անձի պաշտպանական մեխանիզմներից յուրաքանչյուրին և ներկայացրել՝ ինչպես վերջիններիս կարող են դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ: Հեղինակի կողմից չեն անտեսվել նաև մեղքի զգացման նվազման մեխանիզմներին, որոնք կարող են նպաստել հակահիրավական վարքագծի ընդունելիացմանը անձի գիտակցության մեջ: Հեղինակը տվյալ գլխում հանդես է եկել մի շարք հիմնավորված առաջարկություններով՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարի մեխանիզմների կատարելագործմանը և հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետության բարձրացմանը: Առանձնահատուկ ուշադրության են արժանի այն մոտեցումները, որոնք վերաբերում են հասարակական հակակոռուպցիոն դիմադրողականության ամրապնդմանը, արժեքային համակարգի ձևավորմանը և կանխարգելիչ գործիքակազմի զարգացմանը:

Աշխատանքի վերաբերյալ առկա են նաև որոշ դիտողություններ, մասնավորապես՝

1.Թեև պահանջմունքների անբավարարությունը հանդիսանում է կարևոր սոցիալ-տնտեսական և հոգեբանական գործոն, սակայն այն ներկայացնել որպես գրեթե համընդհանուր ազդեցություն ունեցող պայման կարող է դիտարկվել որպես չափազանց ընդհանրացնող մոտեցում: Բացի այդ,

նման ձևակերպումը որոշ չափով նվազեցնում է անհատի պատասխանատվության և ընտրության ազատության դերը, քանի որ ենթադրում է, թե վարքագիծը հիմնականում պայմանավորված է արտաքին ճնշումներով: Մինչդեռ ժամանակակից կրիմինալոգիական մոտեցումները ավելի շատ շեշտում են բազմագործոն մոդելը, որտեղ սոցիալական, հոգեբանական և ինստիտուցիոնալ գործոնները գործում են փոխազդեցության մեջ: Բացի դա գիտական գրականության մեջ բազմիցս ընդգծվել է, որ նույն պայմաններում գտնվող անհատները ցուցաբերում են տարբեր վարքագծային մոդելներ, ինչը պայմանավորված է ոչ միայն արտաքին սոցիալական միջավայրով, այլև ներքին կարգապահական, արժեքային և հոգեբանական կայունությամբ:

Ուստի կարելի է նշել, որ գլխում ներկայացված միտքը հետաքրքիր է և քննարկելի, սակայն պահանջում է ավելի նուրբ ձևակերպում՝ խուսափելով համընդհանուր և բացարձակ եզրահանգումներից:

2. Երկրորդ գլխում նշված վերլուծությունները առավել ամբողջական կլիներ, եթե սահմանափակված չմնար միայն տեսական վերլուծությամբ և ընդհանուր սոցիալական դիտարկումներով: Աշխատանքն առավել տեղեկատվական կլիներ, եթե հեղինակը կատարեր նաև էմպիրիկ հետազոտություն՝ այցելություններ քրեակատարողական հիմնարկներ և դատապարտյալների հետ հարցազրույցներ կամ ուսումնասիրություն՝ նրանց կյանքի պատմությունների, հատկապես մանկության և սոցիալականացման պայմանների վերաբերյալ: Իրական դեպքերի ուսումնասիրությունը կարող էր զգալիորեն բարձրացնել աշխատանքի կիրառական արժեքը:

3. Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է Կոռուպցիոն վարքագիծ ձևավորող կրիմինալոգիական և հոգեբանական ներանձնային խորքային նախադրյալները և կոռուպցիայի կանխումը›› վերտառությամբ:

Ճիշտ է, կոռուպցիայի կանխման հատվածը գլխում ընդգրկված է և մեծ կարևորություն ունի, սակայն որոշ չափով չի ապահովում բավարար ինտեգրում ներանձնային գործոնների վերլուծության հետ: Ավելի նպատակահարմար կլիներ, եթե կանխման մեխանիզմները ուղղակիորեն կապվեին յուրաքանչյուր ներանձնային գործոնի հետ՝ ցույց տալով, թե կոնկրետ որ հոգեբանական կամ կրիմինալոգիական գործոնը ինչ կանխարգելիչ միջոցառմամբ կարող է նվազեցվել:

Այնուհանդերձ, ներկայացված դիտարկումները չեն նսեմացնում կատարված աշխատանքի արժանիքները:

Զարուհի Ռոմիկի Հարությունյանի «Կոռուպցիան վարքագծի կրիմինալոգիական և հոգեբանական պատճառները» վերտառությամբ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է ԺԲ.00.05 Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավ գիտ. թեկնածու Ա. Հ. Օսիկյան

Ա.Հ. Օսիկյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ Ա.Հ. Պետրոսյան